

և ի ձեռս իմ արար զդաւանութիւն կաթողիկէի հաւատոյ՝ հրապարակաւ յեկեղեցւոյ:

Յզատնորոս վարդապետ Պօչանցի՝ Վէրծէրէսքօ մականուանեցեալ, վարժեցեալ ի Հոռոմ ըն՝ համալսարանում Ուսպանեան, ձեռնադրեցաւ յինէն եպիսկոպոս Սլատինոյ, յամի Տեառն 1691ին, և ի թուին Հայոց ՌճԹին, ի յուլիսի 30ին. և գնացեալ ի Թաւանգսիլուանիայ, զՀայս անդէն եղեալս միաբանեցոյց ընդ սրբոյ եկեղեցւոյն Հոռոմայ:

Ի նոյնում ամի Տէր. Եղիայ Սէչօվցի Մնարուլ անուանեցեալ, աւագ քահանայ ընդ ամենայն երկիրն Պուղտանաց, առաջի իմ արար զդաւանութիւն կաթողիկէի հաւատոյ աստ ի Լէօպօլիս:

Մխիթար Վարդապետ Մովսէսի Լաւուակ Միսօ կոչեցեալ, եպիսկոպոս Մուկաց, յամի Տեառն 1693ին, առաջի իմ արար հանդիսապէս յեկեղեցւոյ՝ զդաւանութիւն կաթողիկէի հաւատոյ աստ ի Լէօպօլիս:

Մինչ էի ի Հոռոմ յամի Տեառն 1670ին, եցոյց ինձ Մօնսինեօս Պալատէսքի՝ խորհրդունակ սրբազանի համագումարին զսերեցմանէ հաւատոյ (de Propagande fide), ի բնագրարանում նորա, զբազմութիւն թղթոց մերագնեայց, ի յողունց ամաց և այսր գրեցելոց՝ զկաթողիկէի հաւատոյ, ի կաթողիկոսաց, յեպիսկոպոսաց, և յայլոց. որոց զանուանս՝ այժմ ոչ ունիմ ի մտի:

Գրեցաւ (Թուղթս առ Եւզովիացիս) յամի Տեառն 1703ին, և ի թուին Հայոց ՌճԹին. յամսեանն օգոստոսի 14ին:

(Յիշատակարան). ԶԹուղթս՝ զրեալս յատուկ ձեռամբ Գ. և Ա. հանգուցեալ յարգելոյ իսկ Վարդանայ Յունանեան արքեպիսկոպոսին Լէօպօլիսի Հայոց՝ առ Էվզովացիս, պարգեւեաց ինձ՝ Գ. և Ա. Յովհաննէս Թօպ. (Tobia) Օգոստ. (Augustowich) արքեպիսկոպոսն Հայոց Լէօպօլիսի, Յակոբ Պաղտասարեան Կ. պօլսեցի քահանայիս, և նպարունիս քահանայապետականի Դպրատան, յամի Տեառն 1715, յուլիսի 8 ըստ Լատինաց, յերկուշաբաթաւ, ի Լէօպօլիս, յիւրում բնակութեանն արքեպիսկոպոսականի. փոխանակ Էվզովացոց թղթոցն իմով ձեռամբ գրեցելոց, զոր յինէն առեալ էր նոյն հանգուցեալ Վարդան Յունանեան արքեպիսկոպոսն մեր: — Ex Libris Jacobi Baltezaris Constantinopolitani, sacerdotis Armeni, et Alumni Collegij Pont. Leop. Armen.